

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ

31 դեկտեմբերի 2020թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton Audit S.R.L.

4D, Gara Herastrau str,
Green Court Bucharest,
Building C, 5th floor
Bucharest, Romania
20334

T + 40 21 320 23 28
F + 40 21 320 23 27

Grant Thornton CJSC

Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«Երևանի Զերմալեկտրակենտրոն» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Երևանի Զերմալեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «*Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի*» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտ են արվել այլ աուդիտորի՝ «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից: Վերջինս 2020թ. ապրիլի 30-ին արտահայտել է վերապահումով կարծիք այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:



Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին



լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է ղեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա ղեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Համաձայն Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի միջև 2016թ. մայիսի 12-ին ստորագրված 8615-AM վարկային համաձայնագրի 2-րդ բաժնի C.2.a.(vi) կետի, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության և Ընկերության միջև 2016թ. հունիսի 14-ին ստորագրված Ենթավարկային համաձայնագրի 4.14 կետի, Ընկերությունը պարտավորվել է չկրել որևէ ծախս, պարտք կամ պարտավորություն և չտրամադրել վարկեր կամ դրամաշնորհներ Ընկերության հիմնական գործունեության՝ էներգիայի արտադրության հետ չկապված նպատակների համար:

Մեր կարծիքով, Ընկերությունը բավարարել է վերոնշյալ պայմանը 2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանում:

Գրանթ Թորնթոն Աուդիտ ՍՊԸ

Բուխարեստ, Ռումինիա

Grant Thornton

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

[Signature]

Լիլիթ Արարաջյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

[Signature]

30 ապրիլի 2021թ.



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ

		2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկա- յացված)	2019թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներկա- յացված)
	Ծանոթ.			
<i>Ակտիվներ</i>				
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>				
Հիմնական միջոցներ	4	117,343,926	122,265,277	129,000,249
Ոչ նյութական ակտիվներ		6,019	7,409	9,865
Հետաձգված հարկային ակտիվներ	5	1,031,167	817,321	1,654,959
		<u>118,381,112</u>	<u>123,090,007</u>	<u>130,665,073</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>				
Պաշարներ	6	6,920,416	6,300,237	7,064,124
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	7,341,894	6,888,031	7,757,606
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	11,234,752	11,035,643	3,914,547
		<u>25,497,062</u>	<u>24,223,911</u>	<u>18,736,277</u>
Ընդամենը ակտիվներ		<u><u>143,878,174</u></u>	<u><u>147,313,918</u></u>	<u><u>149,401,350</u></u>

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ

	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկա- յացված)	2019թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներկա- յացված)
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
Կապիտալ և պահուստներ	9			
Բաժնետիրական կապիտալ		1,852,615	1,852,615	1,852,615
Էմիսիոն եկամուտ		11,264,865	11,264,865	11,264,865
Վերագնահատման պահուստ		5,068,978	6,043,162	6,794,520
Կուտակված վնաս		(28,462,734)	(17,465,316)	(19,724,789)
		(10,276,276)	1,695,326	187,211
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ	10	124,417,713	111,709,671	115,060,876
		124,417,713	111,709,671	115,060,876
Ընթացիկ պարտավորություններ				
Վարկերի և փոխառությունների կարճաժամկետ մաս	10	9,242,128	9,700,867	9,900,731
Եկամուտներին վերաբերող շնորհներ		53,779	49,051	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	19,724,044	23,917,545	24,252,532
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		716,786	241,458	-
		29,736,737	33,908,921	34,153,263
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		143,878,174	147,313,918	149,401,350

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. ապրիլի 30-ին:

Արսեն Գրիգորյան
Գլխավոր տնօրեն



Գարիկ Ախոյան

Հաշվապահական ծառայության ղեկավար

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական
հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից
ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկա- յացված)
	Ծանոթ.		
Հասույթ	12	77,309,739	74,975,272
Վաճառքի ինքնարժեք	13	(71,623,890)	(68,775,802)
Համախառն շահույթ		5,685,849	6,199,470
Այլ եկամուտ		43,788	77,255
Վարչական ծախսեր	14	(649,642)	(755,789)
Այլ ծախսեր	15	(701,190)	(2,369,638)
Ակտիվների արժեզրկում		-	(121,907)
Գործառնական գործունեությունից շահույթ		4,378,805	3,029,391
Ֆինանսական եկամուտ	16	1,419,725	1,035,074
Ֆինանսական ծախսեր	16	(1,171,405)	(1,456,817)
Փոխարժեքային տարբերությունից վնաս, զուտ	17	(15,955,787)	(20,436)
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը		(11,328,662)	2,587,212
Շահութահարկի գծով ծախս	18	(642,940)	(1,248,958)
Տարվա շահույթ/(վնաս)		(11,971,602)	1,338,254
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>			
<i>Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի շահույթին կամ վնասին</i>			
Շահութահարկի դրույքաչափի փոփոխության ազդեցություն		-	169,861
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(11,971,602)	1,508,115

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե- տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վերագնա- հատման պահուստ	Կուտակված վնաս	Ընդամենը
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	1,852,615	11,264,865	8,126,425	(19,348,969)	1,894,936
Նախորդ տարիների սխալների ուղղում			(1,331,905)	(375,820)	(1,707,725)
2019թ. հունվարի 1-ի դրությամբ ճշգրտված մնացորդ	1,852,615	11,264,865	6,794,520	(19,724,789)	187,211
Տարվա շահույթ	-	-	-	1,338,254	1,338,254
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք			169,861	-	169,861
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	169,861	1,338,254	1,508,115
Վերագնահատման պահուստի փոխանցում կուտակված շահույթին	-	-	(921,219)	921,219	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,852,615	11,264,865	6,043,162	(17,465,316)	1,695,326
Տարվա վնաս	-	-	-	(11,971,602)	(11,971,602)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(11,971,602)	(11,971,602)
Վերագնահատման պահուստի փոխանցում կուտակված շահույթին	-	-	(974,184)	974,184	-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,852,615	11,264,865	5,068,978	(28,462,734)	(10,276,276)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկա- յացված)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	33,191,947	37,427,520
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(26,239,632)	(22,183,326)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(517,016)	(533,546)
Վճարված հարկեր և պարտավորություններ	(1,635,155)	(2,505,153)
Այլ մուտքեր	19,191	9,405
Վճարված շահութահարկ	(386,874)	-
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	4,432,461	12,214,900
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(778,537)	(899,428)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	-	5,150
Ստացված տոկոսային եկամուտ	1,396,999	958,015
Ներդրումային գործունեությունից ստացված զույր դրամական միջոցներ	618,462	63,737
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	331,857	272,329
Վարկերի և փոխառությունների մարում	(3,965,075)	(3,947,057)
Վճարված տոկոսներ	(1,220,708)	(1,476,561)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զույր դրամական միջոցներ	(4,853,926)	(5,151,289)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ	196,997	7,127,348
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	2,112	(6,252)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	11,035,643	3,914,547
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	11,234,752	11,035,643

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ընկերությունը հիմնադրվել է 1963թ.-ին: «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերություն (Ընկերություն) ստեղծվել է 1997թ.-ին:

Ընկերության հիմնական գործունեությունն է՝

- էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրություն և վաճառք,
- բնական գազի և էլեկտրաէներգիայի ներմուծում և արտահանում:

Ընկերության գործունեությունը՝ ներառյալ սակագնային քաղաքականությունը, կարգավորում է Հայաստանի Հանրապետության Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովը:

Երևանի ջերմաէլեկտրակենտրոնի նախագծման աշխատանքները սկսվել են 1959թ.-ին Խորհրդային Միության «Տեպլոէլեկտրոպրոյեկտ» ինստիտուտի կողմից: Այն որոշվել է կառուցել Հայաստանի արդյունաբերական էներգատար կենտրոններից մեկում՝ Երևանի հարավային արդյունաբերական հանգույցում: Երևանի ջերմաէլեկտրակենտրոնի շինարարությունը սկսվել է 1961թ.-ին: Երևանի ԶԷԿ-ի թվով յոթ տուրբոազդեցատներից առաջինը՝ 50 ՄՎտ հզորությամբ առաջին տուրբինային տեղակայանքը, շահագործման է հանձնվել 1963թ.-ին, իսկ վերջինը՝ 1967թ.-ին:

Շահագործման մեջ լինելով ավելի քան 40 տարի՝ էլեկտրակայանի ազդեցատները և օժանդակ սարքավորումները ենթարկվել են ֆիզիկական և բարոյական էական մաշվածության՝ սպառելով իրենց աշխատանքային նորմատիվային պաշարները, որի հետևանքով զգալիորեն ընկել է կայանի շահագործման հուսալիությունը և էլեկտրական ու ջերմային էներգիայի արտադրության արդյունավետությունը:

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը և Ընկերության ղեկավարությունը բնական գազի այրմամբ գերժամանակակից համակցված շոգեգազային ցիկլով աշխատող նոր էներգաբլոկի կառուցման միջոցով ձեռնամուխ են եղել Երևանի ԶԷԿ-ի վերակառուցման ծրագրի իրականացմանը: 2005թ. մարտի 29-ին ՀՀ կառավարության և միջազգային համագործակցության ճապոնիայի բանկի (ՄՀԾԲ, ներկայումս՝ Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն՝ ՃՄՀԳ) միջև ստորագրվել է վարկային պայմանագիր «Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի (էներգաբլոկ) նախագծի» իրականացման վերաբերյալ: Նշված համաձայնագրի հիման վրա ՄՀԾԲ-ն ՀՀ կառավարությանը տրամադրել է վարկ արտոնյալ պայմաններով՝ հատկացնելով 24,409 միլիոն ճապոնական իեն: Համաձայնագիրը վավերացվել է ՀՀ ազգային ժողովի կողմից 2005թ. հուլիսի 27-ին:

Նոր գործարանի շինարարությունը սկսվել է 2006թ.-ին և ավարտվել 2010թ.-ին: Այն շահագործման է հանձնվել է 2010թ. ապրիլին:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2020թ. ընթացքում կազմել է 195 մարդ (2019թ.՝ 212 մարդ):

Ընկերության գրանցման հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, 0053, Արին Բերդի փողոց, 3-րդ նրբանցք, 3-րդ շենք:

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19) դասակարգեց որպես համավարակ: Կորոնավիրուսն արդեն իսկ էական ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և կենտրոնական բանկը տնտեսության վրա կորոնավիրուսի ազդեցությունը մեղմացնելու նպատակով իրականացնում են շարունակական միջոցառումներ: Ի թիվս այլ միջոցառումների, վերջիններս ներառում են նաև տուժած ճյուղերի և անհատների փոխառությունների սուբսիդավորում և վարկային «արձակուրդներ»:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար: Ընկերությունը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Ընկերության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով, և որոշ հիմնական միջոցների, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքներով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ- ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 19-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2020թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2020թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2020թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքները,*
- *Էականության սահմանումը (ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 փոփոխություններ),*
- *Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ):*

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման՝ ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- «Ուղենշային փոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2)» (ՖՀՄՄ 9, ՀՀՄՄ 39, ՖՀՄՄ 16, ՖՀՄՄ 4 և ՖՀՄՄ 7 փոփոխություններ)
- «Մուրքեր նախքան նախադատված օգտագործումը» (ՀՀՄՄ 16 փոփոխություններ)
- 2018-2020թթ. ՖՀՄՄ-ների տարեկան բարեփոխումներ-(ՖՀՄՄ 1, ՖՀՄՄ 9, ՀՀՄՄ 41, ՖՀՄՄ 16 փոփոխություններ):
- «Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՄ 1 փոփոխություններ)

2.6 Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Ընկերությունը կիրառում է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները և իրականացնում է նախորդ տարիների սխալների ուղղումը հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո թողարկման համար հայտարարված ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթում՝ վերահաշվարկելով ներկայացված նախորդող ժամանակաշրջանների համեմատելի այն գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալ, կամ եթե սխալ տեղի է ունեցել նախքան ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանը, այդ դեպքում՝ վերահաշվարկելով ներկայացված ամենավաղ նախորդող ժամանակաշրջանի համար ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները: Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 522.59 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 641.11 ՀՀ դրամ, 1 ճապոնական իենը՝ 5.06 ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 479.70 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 537.26 ՀՀ դրամ, 1 ճապոնական իենը՝ 4.4 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը)՝ բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Ընկերության հողը, շենքերը, շինությունները և սարքավորումները ներկայացված են վերագնահատված արժեքով, որը իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ հիմնական միջոցի իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և

արժեզրկումից կուտակված կորուստները: Ցանկացած կուտակված մաշվածություն վերագնահատման օրը բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից, և ակտիվի վերագնահատված արժեքում ներկայացվում է զուտ արժեքը: Վերագնահատումներն իրականացվում են բավարար պարբերականությամբ այնպես, որ հաշվեկշռային արժեքն էականորեն չտարբերվի հաշվետու ամսաթվի դրությամբ իրական արժեքից:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ եկամուտներին և արտացոլվում է սեփական կապիտալում՝ որպես վերագնահատման պահուստ: Սակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը:

Վերագնահատումից աճը ճանաչվում է կուտակված շահույթում Ընկերության կողմից ակտիվի օգտագործմանը զուգահեռ: Կուտակված շահույթում ճանաչված վերագնահատումից աճը իրենից ներկայացնում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը: Վերագնահատված հիմնական միջոցի միավորի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճը ուղղակիորեն վերագրվում է կուտակված շահույթին:

Հիմնական միջոցների այլ հոդվածները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	- 20-40 տարի
Փոխանցող հարմարանքներ	- 5-40 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	- 5-40 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 5 տարի
Արտադրատնտեսական գույք	- 5-40 տարի
Այլ	- 2-10 տարի

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի ծրագրերի համար:

3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գույքի և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորուստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Վարձակալված ակտիվներ

Ընկերությունը որպես վարձատու

Որպես վարձատու Ընկերությունը դասակարգում է իր վարձակալությունները որպես գործառնական կամ ֆինանսական:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե այն փոխանցում է հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները և գործառնական, եթե նշվածը տեղի չի ունենում:

3.6 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վաճառքի սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 20-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով)。

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները, որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն, դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1»), և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը՝ օգտվելով պարզեցված մոտեցումից, և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումներ՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Ընկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Ընկերությունը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից: ՖՀՄՍ 9-ի՝ արժեզրկմանը ներկայացվող պահանջների կիրառման մանրամասն վերլուծությունն արտացոլված է ծանոթագրություն 21-ում:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 20.2-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.9 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:

Վերագնահատման պահուստը ներառում է հիմնական միջոցների վերագնահատումից օգուտներն ու վնասները:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.10 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Ընկերությանը՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.11 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.12 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու՝ կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.13 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,
- (գ) սոցիալական ապահովության մասհանումները և այլ սոցիալական վճարները [չի վերաբերում կենսաթոշակային վճարների մասով աշխատակցի հաշվին պարտադիր պահումներին:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցում են ծառայություններ, Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

- (ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղջված գումարը, Ընկերությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ

(կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

- (ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
- (բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարզևավճարներ

Պարզևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.14 Հասույթ

Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթն առաջանում է էլեկտրաէներգիայի ու բնական գազի վաճառքից և հզորության տրամադրումից, ինչպես նաև էլեկտրաէներգիայի և գազի փոխանակումից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

- 1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
- 2 Բացահայտել կատարման պարտականությունները
- 3 Որոշել գործարքի գինը
- 4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
- 5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունները բավարարված են:

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին, կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Ընկերությունը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նույն կերպ, եթե Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Էլեկտրաէներգիայի և գազի վաճառքից հասույթ

Էլեկտրաէներգիայի և գազի վաճառքից հասույթը ճանաչվում է ամսական հիմունքով՝ փաստացի փոխանցված ծավալների հիման վրա:

Հզորության տրամադրումից հասույթ

Հզորության տրամադրումից հասույթը ստացվում է կայանի պարապուրդի ժամանակ և ճանաչվում է ամսական հիմքով՝ պարապուրդի ժամերի հիման վրա:

Ապրանքների փոխանակում

Երբ ապրանքները փոխանակվում են նույն բնույթի և արժեքի ապրանքներով, այդպիսի փոխանակումը չի համարվում հասույթ առաջացնող գործարք:

Երբ ապրանքները վաճառվում են ոչ նմանատիպ ապրանքներով և ծառայություններով փոխանակելու միջոցով, փոխանակումը դիտվում է որպես հասույթ առաջացնող գործարք: Հասույթը չափվում է ստացված ապրանքների իրական արժեքով՝ ճշգրտված ցանկացած փոխանցված դրամական միջոցների և դրանց համարժեքների գումարով: Երբ ստացված ապրանքների իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, հասույթը չափվում է տրված ապրանքների իրական արժեքով՝ ճշգրտված ցանկացած փոխանցված դրամական միջոցների և դրանց համարժեքների գումարով:

Տոկոսներից եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը գեղջում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

Վարձակալական եկամուտ

Վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Հոդ	Շենքեր և շինություններ	Փոխանցող հարմարանքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Անավարտ շինարարություն	Արտադրատնտեսական գույք և այլն	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>								
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	5,388,333	24,598,595	18,348,614	143,980,660	314,888	1,680,339	1,703,367	196,014,796
Ավելացում	-	-	8,043	118,542	105	-	7,046	133,736
Օտարում	-	-	(25,223)	(483)	(2,720)	-	-	(28,426)
Ներքին շարժ	-	(481)	468,304	481	-	-	-	468,304
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,388,333	24,598,114	18,799,738	144,099,200	312,273	1,680,339	1,710,413	196,588,410
Ավելացում	-	3,387	52,250	847,791	-	-	13,199	916,627
Օտարում	-	-	(35,210)	(176,683)	-	-	(288)	(212,181)
Փոխանցում պաշարներին	-	-	(322,295)	(1,160)	-	-	-	(323,455)
Ներքին շարժ	-	792	-	264	-	-	(1,056)	-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,388,333	24,602,293	18,494,483	144,769,412	312,273	1,680,339	1,722,268	196,969,401
<i>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</i>								
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	2,327,435	3,573,857	7,044,210	51,720,735	136,535	1,558,463	653,312	67,014,547
Տարվա հաշվարկ	-	2,465,160	496,327	4,132,230	20,816	-	73,439	7,187,972
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(36)	(828)	(114)	(284)	-	-	(1,262)
Արժեզրկում	-	-	-	-	-	121,876	-	121,876
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,327,435	6,038,981	7,539,709	55,852,851	157,067	1,680,339	726,751	74,323,133
Տարվա հաշվարկ	-	664,636	500,783	4,088,000	20,672	-	52,838	5,326,929
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	(13,991)	(10,437)	-	-	(158)	(24,586)
Ներքին շարժ	-	528	-	22	-	-	(550)	-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,327,435	6,704,144	8,026,501	59,930,436	177,739	1,680,339	778,881	79,625,475
<i>Հաշվեկշռային արժեք</i>								
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,060,898	18,559,133	11,260,029	88,246,349	155,206	-	983,662	122,265,277
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,060,898	17,898,149	10,467,982	84,838,976	134,534	-	943,387	117,343,926

Հիմնական միջոցների մեջ ներառված է հին էլեկտրակայանը, որի հաշվեկշռային արժեքը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 3,866,792 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4,316,223 հազար դրամ): Այս էլեկտրակայանի շահագործումը դադարեցվել է նոր էլեկտրակայանի շահագործումից հետո, և այն պահվել է որպես պահուստային հզորություն:

ՀՀ վարչապետի՝ 2020թ. մայիսի 25-ի N 612-Ա որոշման շրջանակներում Ընկերությունը նախաձեռնել է հին էլեկտրակայանի չշահագործվող և ոչ պիտանի գույքի օտարման գործընթաց:

Հիմնական միջոցներում ներառված նոր էլեկտրակայանի հաշվեկշռային արժեքը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 110,416,331 հազար դրամ է (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 114,854,391 հազար դրամ):

2020թ. հիմնական միջոցների ավելացումը ներառում է կոմպրեսորի արդիականացումը: Արդիականացումը նախատեսված էր բարձրացնելու կոմպրեսորի արտադրողականությունը՝ ավելացնելով էներգաբլոկի հզորությունը, պահպանելով էներգաբլոկի ՕԳԳ-ն և միջնորոգումային ժամկետները:

Բանկային վարկերը և փոխառություններն ապահովելու նպատակով Ընկերությունը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրել է 19,663,410 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 20,243,143 հազար դրամ) հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցներ:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջովին մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմում է 4,865,808 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ին՝ 4,792,895 հազար դրամ):

Ընկերության հողը և ենթակայանները չափվում են վերագնահատված արժեքով, որոնք վերջին անգամ վերագնահատվել են անկախ գնահատողի՝ «Արթին Էնթրփրայզ» ՍՊԸ-ի կողմից 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Գնահատումը կատարվել է՝ հիմնվելով շուկայում վերջերս իրականացված գործարքների վրա՝ «պարզեցված ձեռքի հեռավորության» պայմանով: Վերագնահատումից առաջացած աճը՝ հանած համապատասխան հետաձգված հարկերը, կրեդիտագրվել է վերագնահատման պահուստին՝ սեփական կապիտալում:

Իրական արժեքի որոշման մեթոդներն ու մոտեցումներն ավելի մանրամասն նկարագրված են ծանոթագրություն 22-ում:

Եթե հիմնական միջոցները ներկայացված լինեին սկզբնական արժեքով, ապա հաշվետու ամսաթվի դրությամբ դրանց հաշվեկշռային արժեքները կկազմեին 112,274,948 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 116,222,116 հազար դրամ):

Մաշվածության գծով ծախսը բաշխվել է հետևյալ կերպ.

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառքի ինքնարժեք	4,682,547	4,825,096
Վարչական ծախսեր	206,901	258,134
Այլ ծախսեր	437,481	2,109,742
	5,326,929	7,187,972

5 Հետաձգված հարկային ակտիվներ

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2020թ.	2019թ. (վերաներկա- յացված)
Տարեսկզբի մնացորդ	817,321	1,654,959
Շահույթում կամ վնասում ճանաչված (ծախս)/փոխհատուցում	213,846	(1,007,500)
Կրեդիտագրված այլ համապարփակ ֆինանսական արդյունքին	-	169,862
Տարեվերջի մնացորդ	1,031,167	817,321

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2020թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2020թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Ֆինանսական ակտիվներ	2,057,580	-	2,057,580
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	79,237	-	79,237
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7,053	-	7,053
	2,143,870	-	2,143,870
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Հիմնական միջոցներ	1,326,549	(213,846)	1,112,703
	1,326,549	(213,846)	1,112,703
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	817,321	213,846	1,031,167

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2019թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համա- պարփակ ֆինան- սական արդյունք- ներում ճանաչված	31 դեկտեմբերի 2019թ. (վերաներկա- յացված)
Հետաձգված հարկային ակտիվներ				
Ֆինանսական ակտիվներ	2,211,138	(153,558)	-	2,057,580
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	132,312	(53,075)	-	79,237
Հարկային վնաս	1,001,403	(1,001,403)	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	8,736	(1,683)	-	7,053
	3,353,589	(1,209,719)	-	2,143,870
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ	1,698,630	(202,219)	(169,862)	1,326,549
	1,698,630	(202,219)	(169,862)	1,326,549
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	1,654,959	(1,007,500)	169,862	817,321

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված գումարները վերաբերում են հիմնական միջոցների վերագնահատմանը:

6 Պաշարներ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պահեստամասեր	5,714,655	5,002,716
Նյութեր	1,031,244	1,117,507
Շինանյութեր	82,790	93,263
Այլ	91,727	86,751
	6,920,416	6,300,237

7 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	6,139,808	5,622,285
Պարտքային կորուստների համար պահուստ	(569,922)	(569,922)
	5,569,886	5,052,363
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	2,557	31,776
Կանխավճարված հարկեր	1,769,451	1,803,892
	7,341,894	6,888,031

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Վաճառքից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 26 օր (2019թ.՝ 24 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Հաշվետու ամսաթվի դրությամբ 404,575 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 404,575 հազար դրամ) առևտրային դեբիտորական պարտքերի գծով պարտքային կորուստների պահուստը վերաբերում է «Արցախ Էներգո» ՓԲԸ-ին: Արժեզրկված դեբիտորական պարտքերի ժամկետայնությունը մեկ տարուց ավել է:

Պարտքային կորուստների պահուստի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2020թ.	2019թ.
Պարտքային կորուստների պահուստը հունվարի 1-ի դրությամբ	569,922	567,797
Տարվա ընթացքում պահուստի նվազում	-	(2,125)
Պարտքային կորուստների պահուստը դեկտեմբերի 31-ի դրությամբ	569,922	569,922

21 (բ) ծանոթագրությունում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային կորուստների վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

Տե՛ս ծանոթագրություն 21 (ա)՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	208	2,954
Բանկային հաշիվներ	134,544	132,689
Ժամկետային ավանդներ	11,100,000	10,900,000
	<u>11,234,752</u>	<u>11,035,643</u>

Ժամկետային ավանդներն իրենցից ներկայացնում են «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերությունում ներդրված 13.4% տարեկան տոկոսադրույքով բանկային ավանդը, որը ենթակա է մարման 2021թ. հունիսի 7-ին:

Տե՛ս ծանոթագրություն 21՝ դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդների արժույթների բացահայտման համար:

9 Կապիտալ և պահուստներ

9.1 Բաժնետիրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ բան նշված չէ	Սովորական բաժնետոմսեր 2020թ.	Սովորական բաժնետոմսեր 2019թ.
Հայտարարված բաժնետոմսեր		
Սովորական բաժնետոմսերի քանակը, յուրաքանչյուրը՝ 815 դրամ	2,273,147	2,273,147
Սովորական բաժնետոմսերի քանակը, յուրաքանչյուրը՝ 815 դրամ	<u>2,273,147</u>	<u>2,273,147</u>

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

9.2 Պահուստային կապիտալ

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի և Ընկերության կանոնադրության՝ Ընկերության բաշխման ենթակա շահույթը սահմանափակվում է չբաշխված շահույթի մնացորդով, ինչպես գրանցված է Ընկերության՝ հրապարակման ենթակա ֆինանսական հաշվետվություններում:

Համաձայն ՀՀ օրենսդրության՝ Ընկերությունը պետք է ստեղծի պահուստ իր կուտակված շահույթի հաշվին, որը հավասար կլինի բաժնետիրական կապիտալի առավելագույնը 15%-ին: Պահուստի նպատակն է ապագա կորուստների ծածկումը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը չունի կուտակված շահույթ և, հետևաբար, չի ստեղծել պահուստային կապիտալ:

9.3 Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը առաջացել է նախորդ տարիներին մեկ բաժնետոմսի գնի նվազեցումների արդյունքում: Հաշվետու տարում և նախորդ տարում Ընկերության բաժնետոմսերի քանակը մնացել է անփոփոխ՝ 2,273,147: Վերջին անգամ բաժնետոմսի գնի փոփոխություն տեղի է ունեցել 09.08.2018թ-ին, մեկ բաժնետոմսի գինը սահմանվել է 815 դրամ՝ համաձայն Ընկերության բաժնետիրական կապիտալի նվազեցման վերաբերյալ ՀՀ Կառավարության N 884-Ա որոշման:

9.4 Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստն առաջանում է հիմնական միջոցների վերագնահատման արդյունքում: Կուտակված շահույթում Ընկերության կողմից ակտիվի օգտագործմանը զուգահեռ ճանաչված վերագնահատումից աճը իրենից ներկայացնում է ակտիվի վերագնահատված արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը: Վերագնահատված ակտիվի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճը նույնպես վերագրվում է կուտակված շահույթին: Վերագնահատման պահուստը ներկայացված է համապատասխան շահութահարկից զուտ:

10 Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ապահովված վարկեր ՀՀ Ֆինանսների նախարարությունից	4,648,638	5,107,377	124,417,713	111,709,671
Այլ փոխառություններ	4,593,490	4,593,490	-	-
	9,242,128	9,700,867	124,417,713	111,709,671

Վարկերի և փոխառությունների մանրամասները ներկայացված են ստորև:

Վարկատու	Արտարժույթ	Արդյունավետ տոկոսադրույք	Մարման ժամկետ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ճապոնիայի միջազգային համագործակցության բանկ	Ճապոնական իեն	0.75%	3/30/2045	107,596,840	97,231,560
Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ	ԱՄՆ դոլար	1.98%	11/15/2040	10,741,310	9,550,670
Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ	ԱՄՆ դոլար	1.83%	11/15/2039	8,721,927	8,024,190
Վերակառուցման և զարգացման բանկի համաֆինանսավորում	ՀՀ դրամ	1.83%	11/15/2039	2,006,274	2,010,610
«Որոտան» ՀԷԿ	ՀՀ դրամ	0%	12/31/2020	4,593,490	4,593,490
				133,659,841	121,410,530

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 1-ում, ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը և «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ղեկավարությունը բնական գազի այրմամբ գերժամանակակից համակցված շոգեգազային ցիկլով աշխատող նոր Էներգաբլոկի կառուցման միջոցով ձեռնամուխ են եղել Երևանի ԶԷԿ-ի վերակառուցման ծրագրի

իրականացմանը: Այդ նպատակով 2005թ. մարտի 29-ին Հայաստանի Հանրապետության կառավարության և Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալության (ՃՄՀԳ) միջև ստորագրվել է վարկային պայմանագիր «Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի (էներգաբլոկ) նախագծի» իրականացման վերաբերյալ: Նշված համաձայնագրի հիման վրա ՃՄՀԳ-ն ՀՀ կառավարությանը տրամադրել է զարգացման պետական աջակցության (ԶՊԱ) վարկ արտոնյալ պայմաններով՝ 0.75 % տարեկան տոկոսադրույքով և 40 տարի մարման (որից 10 տարին՝ արտոնյալ) ժամկետով՝ հատկացնելով 24,409 միլիոն ճապոնական իեն: Համաձայնագիրը վավերացվել է ՀՀ ազգային ժողովի կողմից 2005թ. հուլիսի 27-ին: 2005թ. մարտին ենթավարկային պայմանագիր է կնքվել Ընկերության և Ֆինանսների նախարարության միջև՝ նույն պայմաններով:

ՀՀ Ֆինանսների նախարարությունից ստացված վարկերը ներառում են էլեկտրաէներգետիկական ոլորտի ֆինանսական առողջացման ծրագրերի շրջանակներում ստացված վարկը: Ֆինանսավորումը կատարվել է Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ) միջև ստորագրված վարկային համաձայնագրի շրջանակներում:

Այլ փոխառությունները ներառում են «Որոտան» ՀԷԿ-ից ստացված 4,593,490 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4,593,490 հազար դրամ) անտոկոս փոխառությունները, որոնք փոխանցվել են Ընկերությանը ցեսիայի պայմանագրի հիման վրա:

Վարկերի և փոխառությունների իրական արժեքը հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ զեղչման ազդեցությունն էական չէ:

ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ստացված վարկերն ապահովված են թողարկված հասարակ մուրհակներով և հիմնական միջոցներով (տե՛ս ծանոթագրություն 4):

Ընկերության արտարժույթային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 21-ում:

11 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	16,128,400	20,310,492
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	61,250	51,043
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	34,394	56,010
Այլ	3,500,000	3,500,000
	19,724,044	23,917,545

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 82 օր (2019թ.՝ 108 օր): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Ընկերության արտարժույթային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 21-ում:

Այլ կրեդիտորական պարտքը ներառում է «Որոտան ՀԷԿ» ՓԲԸ-ին պարտավորությունը, որն առաջացել է «Հայգազարդ» ՓԲԸ և «Որոտանի ՀԷԿ» ՓԲԸ միջև կնքած պահանջի իրավունքը «Երևան ԶԷԿ» ՓԲԸ-ին զիջելու մասին պայմանագրով:

12 Հասույթ

Հազար դրամ

	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Էլեկտրաէներգիայի վաճառք	48,631,070	49,463,759
Բնական գազի վաճառք	17,510,491	13,371,725
Հզորության տրամադրում	11,168,178	12,139,788
	<u>77,309,739</u>	<u>74,975,272</u>

Ընկերության հասույթն ըստ ճանաչման ժամկետայնության ներկայացված է ստորև.

Հազար դրամ

	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ժամանակի մեջ ինչ-որ պահին ճանաչված հասույթ	66,141,561	62,835,484
Ժամանակի ընթացքում ճանաչված հասույթ	11,168,178	12,139,788
	<u>77,309,739</u>	<u>74,975,272</u>

13 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ

	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկա- յացված)
Արտադրությունում օգտագործված գազի և այլ նյութերի ինքնարժեք	27,578,045	29,602,557
Ձեռքբերված էլեկտրաէներգիայի ինքնարժեք	18,441,568	17,875,740
Վաճառված գազի ինքնարժեք	17,495,419	13,376,050
Մաշվածության և պահպանման ծախսեր	4,771,532	4,825,096
Էներգիայի և գազի տեղափոխման ծառայություններ	2,915,276	2,656,642
Փոխհատուցում աշխատակիցներին	422,050	439,717
	<u>71,623,890</u>	<u>68,775,802</u>

14 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխհատուցում աշխատակիցներին	239,096	273,399
Մաշվածության, ամորտիզացիայի և պահպանման ծախսեր	211,271	258,134
Չփոխհատուցվող հարկեր և պարտավորություններ	115,293	120,453
Առդիտ և խորհրդատվություն	41,918	44,829
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	16,546	37,644
Այլ	25,518	26,330
	649,642	755,789

15 Այլ ծախսեր

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մաշվածություն	437,481	2,109,742
Անվտանգության ծախսեր	130,355	130,355
Տույժեր և տուգանքներ	5,677	12,761
Այլ	127,677	116,780
	701,190	2,369,638

16 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ավանդների գծով տոկոսային եկամուտ	1,419,725	1,035,074
Ընդհանուր ֆինանսական եկամուտ	1,419,725	1,035,074
ՀՀ Ֆինանսների նախարարությունից ստացված վարկի տոկոսային ծախս	1,171,405	1,456,817
Ընդհանուր ֆինանսական ծախս	1,171,405	1,456,817
Զուտ ֆինանսական եկամուտ/(ծախսեր)	248,320	(421,743)

17 Փոխարժեքային տարբերությունից վնաս

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,112	(6,252)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	9,313
	2,112	3,061
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	(15,931,825)	(143,404)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(26,074)	119,907
	(15,957,899)	(23,497)
	(15,955,787)	(20,436)

18 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	856,786	241,458
Հետաձգված հարկ (տե՛ս ծանոթագրություն 5)	(213,846)	1,007,500
	642,940	1,248,958

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավե տ հարկային դրույքաչափ (%)	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավե տ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	(11,328,662)		2,587,212	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2019թ.՝ 20%)	(2,039,159)	18	517,442	20
(Զհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	2,682,099	(24)	1,472,241	57
Կուտակված հարկային վնասի օգտագործում	-	-	(1,001,402)	(39)
Հարկային դրույքաչափի փոփոխության ազդեցությունը	-	-	260,677	10
Շահութահարկի գծով ծախս	642,940	(6)	1,248,958	48

19 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

19.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ, գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Պաշարներ

Ղեկավարությունը գնահատում է պաշարների զուտ իրացման արժեքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի ամենավստահելի ապացույցները: Այս պաշարների ապագա իրացման վրա կարող են ազդեցություն ունենալ ապագա տեխնոլոգիաները կամ շուկայով առաջնորդվող այլ փոփոխությունները, որը կարող է նվազեցնել ապագա վաճառքի գները:

Դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ

Դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Ընկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան: Պահուստի դրույքաչափերը հաշվարկվում են՝ հիմնվելով հաճախորդներից առաջացած դեբիտորական պարտքերի ժամկետանց օրերի վրա:

Սկզբնապես պահուստի մատրիցան հիմնված է Ընկերության՝ պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցների վրա: Ընկերությունը ստուգում է պահուստի մատրիցան՝ պատմական պարտքային կորուստի փորձառությունն ապագային առնչվող տեղեկության հետ ճշգրտելու համար: Տնտեսական պայմանների կանխատեսման ազդեցությունն ակնկալվող պարտքային կորուստների որոշման վրա աննշան է եղել: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցները թարմացվում են և փոփոխությունները վերլուծվում են ապագային առնչվող գնահատականներում:

Պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցների, տնտեսական պայմանների կանխատեսման և ակնկալվող պարտքային կորուստների միջև հարաբերակցության գնահատումը նշանակալի է: Ակնկալվող պարտքային կորուստների արժեքը հանգամանքների և կանխատեսվող տնտեսական պայմանների նկատմամբ զգայուն է: Ընկերության պատմական պարտքային կորուստի փորձառությունը և տնտեսական պայմանների կանխատեսումը կարող են չարտահայտել հաճախորդի՝ ապագայում սպասվող պարտքը չմարելու հավանականությունը: Ընկերության առևտրային դեբիտորական պարտքի գծով ակնկալվող պարտքային կորուստների վերաբերյալ տեղեկությունը բացահայտված է ծանոթագրություն 21-ում:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Այն չափը, որով կարող է ճանաչվել հետաձգված հարկային ակտիվ, կախված է այն հավանականության գնահատումից, թե արդյո՞ք ապագայում հասանելի կլինի եկամուտ, որի դիմաց կիրացվեն նվազեցման ենթակա ժամանակավոր տարբերությունները և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասը: Ի լրումն, անհրաժեշտ է էական դատողություն հարկային միջավայրում իրավական և տնտեսական սահմանափակումների և անորոշությունների գնահատման ժամանակ:

20 Ֆինանսական գործիքներ

20.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.7-ում:

20.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	3,612,061	4,875,349
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11,234,752	11,035,643
	14,846,813	15,910,992

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	133,659,841	121,410,538
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	19,662,794	22,088,704
	153,322,635	143,499,242

21 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային և տոկոսադրույքային ռիսկերի, որը բխում է ինչպես գործառնական, այնպես էլ ֆինանսական գործունեությունից:

Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության արտերկրյա ձեռքբերումներից, որոնք արտահայտված են ԱՄՆ դոլարով, ինչպես նաև վարկերից և փոխառություններից, որոնք ի սկզբանե արտահայտված են ճապոնական իենով և ԱՄՆ դոլարով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկվում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

	ԱՄՆ դոլար	Եվրո	Ճապոնական իեն
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10,741	814	-
	10,741	814	-
Ֆինանսական պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	19,463,237	-	107,596,840
	19,463,237	-	107,596,840
Զուտ արդյունք	(19,452,496)	814	(107,596,840)

Հոդված

	ԱՄՆ դոլար	Եվրո	Ճապոնական իեն
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	682	1
	-	682	1
Ֆինանսական պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	17,574,867	-	97,231,565
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4	-	-
	17,574,871	-	97,231,565
Զուտ արդյունք	(17,574,871)	682	(97,231,564)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգալունությունը ԱՄՆ դոլարի և ճապոնական իենի նկատմամբ դրամի 15% (2019թ.՝ 10%) աճին/նվազմանը: 15%-ը (2019թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է:

Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 15%-ով (2019թ.՝ 10%):

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի և ճապոնական իենի նկատմամբ 15%-ով (2019թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը.

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Ճապոնական իենի ազդեցություն	
	2020թ.	2019թ.	2020թ.	2019թ.
Շահույթ կամ վնաս	2,917,874	1,757,487	16,139,526	9,723,156

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված վերկերի մնացորդներից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքներն ու առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	3,612,061	4,875,349
Մնացորդներ բանկերում	11,234,544	11,032,689
	14,846,605	15,908,038

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է դրանք տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Ընկերության առևտրային դեբիտորական պարտքերը հիմնականում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից են: Այս դեբիտորական պարտքերի համար պարտքային ռիսկն ընդունելի է:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Ընկերությունը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող կորուստների դրույքաչափերը հաշվարկվել են՝ հիմնվելով 2020թ. դեկտեմբերի 31-ին և 2019թ. դեկտեմբերի 31-ին համապատասխանաբար նախորդող 24 ամսվա ընթացքում վաճառքի դիմաց ստացված վճարումների պատկերի վրա, ինչպես նաև հաշվի առնելով այդ ժամանակամիջոցում ձևավորված պատմական պարտքային կորուստները: Այս պատմական դրույքաչափերը ճշգրտվում են, որպեսզի արտացոլեն ընթացիկ և ապագային վերաբերող

մակրոտնտեսական գործոնները, որոնք ազդեցություն ունեն հաճախորդի՝ չվճարված մնացորդը մարելու կարողության վրա: Ընկերությունը գնահատել է, որ ամենահամապատասխան գործոն են հանդիսանում համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) և գործազրկության մակարդակը, և ճշգրտում է կորուստների պատմական դրույքաչափերն այդ գործոններով պայմանավորված սպասվող փոփոխությունների չափով: Այնուամենայնիվ, հաշվի առնելով պարտքային ռիսկի կարճաժամկետ բնույթը՝ այս մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը հաշվետու ժամանակաշրջանում էական չէ:

Երբ հավանական չէ առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրումը, դրանք դուրս են գրվում (ապաճանաչվում են): Հաշիվ-ապրանքագրի ամսաթվից հետո 365 օրվա ընթացքում վճարում չկատարելը և Ընկերության հետ այլընտրանքային վճարման վերաբերյալ համաձայնության չգալը համարվում է գումարի վերադարձման վերաբերյալ խելամիտ սպասումներ չունենալու համար հայտանիշ:

գ) *Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված են Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված կլինեի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2020թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսա- դրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք		0.95%	
Մինչև 6 ամիս	19,662,794	2,728,431	22,391,225
6 ամսից մինչև 1 տարի	4,593,490	2,726,335	7,319,825
1-5 տարի	-	21,478,125	21,478,125
Ավելի քան 5 տարի	-	116,018,961	116,018,961
	24,256,284	142,951,852	167,208,136

2019թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսա- դրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք		1.20%	
Մինչև 6 ամիս	26,682,194	-	26,682,194
6 ամսից մինչև 1 տարի	-	5,107,377	5,107,377
Ավելի քան 5 տարի	-	111,709,671	111,709,671
	26,682,194	116,817,048	143,499,242

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից, մասնավորապես՝ դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, ինչպես նաև առևտրային դեբիտորական պարտքերից ակնկալվող դրամային հոսքերը: Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային դեբիտորական պարտքերն էականորեն ցածր են անհրաժեշտ դրամական արտահոսքերից: Ընկերության ղեկավարությունը շարունակական մոնիտորինգ է իրականացնում Ընկերության իրացվելիության գծով, ապահովելու համար գործառնական գործունեության համար անհրաժեշտ դրամական միջոցների առկայությունը:

Ընկերության 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կրեդիտորական պարտքերը ներառում են էական մնացորդ այլ պետական ընկերություններից, որոնց վճարման ժամկետը պարբերաբար երկարաձգվում է: Հետևաբար այս գումարների մասով իրացվելիության ռիսկն ընդունելի է:

22 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների՝ ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունն իրական արժեքներով չափվող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ չունի:

22.1 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափում

Ընկերության հողը, շենքերը, շինությունները և սարքավորումները հաշվառվում են վերագնահատված արժեքով: Հողի, շենքերի, շինությունների և սարքավորումները գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 2-րդ և 3-րդ մակարդակում: Այս ակտիվների իրական արժեքները գնահատվում են՝ հիմք ընդունելով անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գնահատողների գնահատականները, որոնք ունեն անհրաժեշտ արտոնագրեր: Վերոնշյալ հիմնական միջոցները վերջին անգամ վերագնահատվել են անկախ գնահատողի՝ «Արթին Էնթերփրայս» ՍՊԸ-ի կողմից 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Զգալի փոփոխականները և ենթադրությունները մշակվել են ղեկավարության հետ սերտ համագործակցության պայմաններում: Հետագա տեղեկատվությունը ներկայացված է ստորև:

Հող (2-րդ մակարդակ)

Գնահատումն իրականացվել է՝ օգտագործելով շուկայական մոտեցումը, որն արտացոլում է նմանատիպ գույքի համար վերջերս իրականացված շուկայական գործարքներում դիտարկված գները և միավորում է վերոհիշյալ հողին յուրահատուկ ցուցանիշների ճշգրտումները՝ ներառյալ հողամասի չափը, գտնվելու վայրը, սահմանափակումները և օգտագործման նպատակը:

Նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալը վերոհիշյալ հոդին յուրահատուկ ցուցանիշների ճշգրտումն է: Այս ճշգրտման չափը և ուղղությունը կախված է նմանատիպ գույքի հետ կապված դիտելի շուկայական գործարքների քանակից և բնույթից, որոնք օգտագործվում են որպես գնահատման սկզբնակետ: Չնայած այս ելակետային տվյալը հիմնված է սուբյեկտիվ դատողության վրա, դեկավարությունը ենթադրում է, որ ընդհանուր գնահատումը էական ազդեցություն չի կրի ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրություններից:

Շենքեր և շինություններ (3-րդ մակարդակ)

Շենքերի և շինությունների իրական արժեքը գնահատվել է՝ օգտագործելով փոխարինման (ծախսային) մեթոդը:

Փոխարինման ծախսումների մոտեցման միջոցով շենքերի իրական արժեքները որոշելիս գնահատողը հաշվի է առել նմանատիպ շենք կառուցելու համար պահանջվող ծախսերը՝ հանելով հաշվարկված մաշվածությունը, որը ներառում է վերագնահատման օրվա դրությամբ ֆիզիկական, տնտեսական և գործառնական մաշվածքը:

Սարքավորումներ (3-րդ մակարդակ)

Ընկերության սարքավորումների մեծ մասն իրենց բնույթով առանձնահատուկ են և հազվադեպ են վաճառվում բաց շուկայում, բացառությամբ որպես մաս վաճառվող սարքավորումները: Նմանատիպ սարքավորումների շուկան Հայաստանի Հանրապետությունում ակտիվ չէ և չի ապահովում համեմատական սարքավորումների վաճառքի բավականաչափ քանակ՝ օգտագործելով շուկայական մոտեցում իրական արժեքը որոշելու համար: Հետևաբար, սարքավորումների իրական արժեքը սկզբնապես որոշվում է՝ օգտագործելով մաշված փոխարինման արժեքը:

23 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետիրոջը բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, պահուստներն ու չբաշխված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են վարկերն ու փոխառությունները, որոնք բացահայտված են ծանոթագրություն 10-ում:

Դեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ): Հաշվի են առնվում Ընկերության վարկերի տարբեր դասերի ստորադասության մակարդակները: Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետիրոջը վճարվող բաժնեմասի գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետիրոջը, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

Ընկերությունը վերահսկում է կապիտալը՝ կիրառելով «զուտ պարտքի» և «ճշգրտված սեփական կապիտալի» հարաբերակցությունը:

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Զուտ պարտք</i>		
Վարկեր և փոխառություններ	133,659,841	121,410,538
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	(11,234,752)	(11,035,643)
	122,425,089	110,374,895
<i>Ճշգրտված սեփական կապիտալ</i>		
Ընդհանուր սեփական կապիտալ	(10,276,276)	1,695,326
<i>Զուտ պարտքի և ճշգրտված սեփական կապիտալի հարաբերակցության գործակից</i>	(11.91)	65.11

Գործակցի փոփոխությունը հիմնականում պայմանավորված է 2020թ. կրած վնասով:

24 Պայմանականություններ

24.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

24.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել ՀՀ Հարկային օրենսգրքի տրանսֆերային գնագոյացման կարգավորումներին վերաբերող գլուխը, որը սահմանում է առանձնահատկություններ փոխկապակցված կողմերի միջև կատարվող գործարքների վերաբերյալ, սահմանում է հարկային մարմնի կողմից այդ գործարքները վերահսկվող համարելու, ինչպես նաև դրանց վերաբերյալ ծանուցում և փաստաթղթավորում ներկայացնելու կարգը: Նշված կարգավորումների նպատակն է պարզել, թե արդյոք փոխկապակցված կողմերի միջև գործարքների ֆինանսական ցուցանիշները համապատասխանում են պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին, ինչպես նաև չհամապատասխանելու դեպքում սահմանվում է դրանց ճշգրտման կարգը հարկման բազան հաշվարկելու նպատակով: Նշված կարգավորումների կիրառությունը ենթակա է հարկային մարմնի կողմից առանձին ստուգման, և պահանջված փաստաթղթավորման բացակայությունը կամ ոչ պատշաճ ներկայացնելը կարող է հանգեցնել էական հետևանքների:

Օրենսգրքի նշված գլուխը պարունակում է շատ անորոշություններ, իսկ նախկինում Հայաստանի Հանրապետությունում նմանատիպ կարգավորումներ չեն կիրառվել: Արդյունքում՝ չկա նմանատիպ կարգավորումների մեկնաբանման և կիրառման բավարար փորձառություն:

Սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ Ընկերությունն իրականացրել է տրանսֆերային գնագոյացման կարգավորումներին համապատասխան վերլուծություն, որի արդյունքում եզրահանգել է, որ այս փոփոխության ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա էական չէ:

Վերոնշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության՝ իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

24.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Ընկերությունը համակցված շոգեգազային ցիկլով (ՀՇԳՑ) էներգաբլոկի GT13E2 գազատուրբինի կոմպրեսորի արդիականացման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 2020թ. հոկտեմբերի 15-ին թվագրված թիվ ԲՓ 000088 պետական փորձաքննության արդյունքում ստացել է դրական եզրակացություն: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

25 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Ընկերության՝ ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորություններում փոփոխությունները դասակարգվում են հետևյալ կերպ.

Հազար դրամ	Երկարա- ժամկետ փոխառությ- ւոններ	Կարճա- ժամկետ փոխառությ- ւոններ	Ընդամենը
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	115,060,876	9,900,731	124,961,607
Դրամային հոսքերից			
Մուտքեր	272,329	-	272,329
Մարումներ՝ ներառյալ տոկոսները	(5,423,618)	-	(5,423,618)
Ոչ դրամային հոսքերից			
Տոկոսի հաշվեգրում	1,456,816	-	1,456,816
Փոխարժեքային տարբերությունից վնաս	143,404	-	143,404
Վերադասակարգում	199,864	(199,864)	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	111,709,671	9,700,867	121,410,538
Դրամային հոսքերից			
Մուտքեր	331,856	-	331,856
Մարումներ՝ ներառյալ տոկոսները	(5,185,783)	-	(5,185,783)

<i>Ոչ դրամային հոսքերից</i>			
Տոկոսի հաշվեգրում	1,171,405	-	1,171,405
Փոխարժեքային տարբերությունից վնաս	15,931,825	-	15,931,825
Վերադասակարգում	458,739	(458,739)	-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	124,417,713	9,242,128	133,659,841

26 Կապակցված կողմեր

Ընկերության 100% բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետության կառավարությանը, հետևաբար, Ընկերության կապակցված կողմեր են համարվում նաև բոլոր պետական ձեռնարկությունները: Ընկերության կապակցված կողմերը ներառում են նաև հիմնական ղեկավար անձնակազմը:

26.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության:

26.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են.

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործարքներ		
<i>Բաժնեգրեր</i>		
Տոկոսային ծախսի հաշվեգրում	1,171,405	1,456,772
Վարկի ստացում	331,857	272,329
<i>Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ</i>		
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում	2,634,540	2,733,221
<i>Հիմնական ղեկավար անձնակազմ</i>		
Աշխատավարձ և այլ վարձատրություններ	10,196	18,437
Հազար դրամ		
Մնացորդներ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Բաժնեգրեր</i>		
Վարկեր և փոխառություններ	129,066,351	116,817,048
<i>Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ</i>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,018,712	5,059,878
Վարկեր և փոխառություններ	4,593,490	4,593,490

27 Համադրելի ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

2020թ. ընթացքում Ընկերությունը նախորդ տարիներին վերաբերող սխալներ գտնելու արդյունքում որոշել է վերաներկայացնել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն ՀՀՄՍ 8-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»: Վերոնշյալի արդյունքում, Ընկերության ղեկավարությունը որոշել է համապատասխան ճշգրտումներ կատարել ֆինանսական հաշվետվություններում, որոնք կիրառվել են հետընթաց՝ հիմնվելով Ընկերության որդեգրած քաղաքականության վրա:

Կատարված ճշգրտումները հիմնականում վերաբերում են Ընկերության կողմից նախորդ տարիներին իրականացված՝ հիմնական միջոցների ապամոնտաժման և փոխարինման աշխատանքներին, որոնք ամբողջությամբ չէին ձևակերպվել Ընկերության հաշիվներում: Այս ճշգրտումն ազդել է նախորդ տարիների հիմնական միջոցների, վերագնահատման պահուստի, հետաձգված հարկերի մնացորդների, ինչպես նաև նախորդ տարիների ֆինանսական արդյունքների վրա:

Ճշգրտումների ազդեցությունը ներկայացված է ստորև.

27.1 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2019թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. հունվարի 1-ի դրությամբ վերաներկայացված ֆինանսական հաշվետվությունների համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Համաձայն նախորդ հաշվետվության	Ճշգրտում	Ճշգրտված մնացորդ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	123,882,672	(1,617,395)	122,265,277
Ոչ նյութական ակտիվներ	7,409		7,409
Հետաձգված հարկային ակտիվներ	675,613	141,708	817,321
	124,565,694		123,090,007
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6,286,246	13,991	6,300,237
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6,888,031		6,888,031
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11,035,643		11,035,643
	24,209,920		24,223,911
Ընդամենը ակտիվներ	148,775,614		147,313,918
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ			
Բաժնետիրական կապիտալ	1,852,615		1,852,615
Էմիսիոն եկամուտ	11,264,865		11,264,865
Վերագնահատման պահուստ	7,566,253	(1,523,091)	6,043,162
Կուտակված վնաս	(17,526,711)	61,395	(17,465,316)
	3,157,022		1,695,326
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ	111,709,671		111,709,671
	111,709,671		111,709,671
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկերի և փոխառությունների կարճաժամկետ մաս	9,700,867		9,700,867
Եկամուտներին վերաբերող շնորհներ	49,051		49,051
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	23,917,545		23,917,545
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ	241,458		241,458
	33,908,921		33,908,921
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	148,775,614		147,313,918

Հազար դրամ

2019թ. հունվարի 1-ի դրությամբ

	Համաձայն նախորդ հաշվետվության	Ճշգրտում	Ճշգրտված մնացորդ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	130,617,644	(1,617,395)	129,000,249
Ոչ նյութական ակտիվներ	9,865		9,865
Հետաձգված հարկային ակտիվներ	1,745,289	(90,330)	1,654,959
	132,372,798		130,665,073
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7,064,124		7,064,124
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7,757,606		7,757,606
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,914,547		3,914,547
	18,736,277		18,736,277
Ընդամենը ակտիվներ	151,109,075		149,401,350
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուսպներ			
Բաժնետիրական կապիտալ	1,852,615		1,852,615
Էմիսիոն եկամուտ	11,264,865		11,264,865
Վերագնահատման պահուստ	8,126,425	(1,331,905)	6,794,520
Կուտակված վնաս	(19,348,969)	(375,820)	(19,724,789)
	1,894,936		187,211
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ	115,060,876		115,060,876
	115,060,876		115,060,876
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկերի և փոխառությունների կարճաժամկետ մաս	9,900,731		9,900,731
Եկամուտներին վերաբերող շնորհներ	-		-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	24,252,532		24,252,532
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ	-		-
	34,153,263		34,153,263
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	151,109,075		149,401,350

27.2 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի		
	Համաձայն նախորդ հաշվետվության	Ճշգրտում	Ճշգրտված գումար
Հասույթ	74,975,272	-	74,975,272
Վաճառքի ինքնարժեք	(68,789,792)	13,990	(68,775,802)
Համախառն շահույթ	6,185,480		6,199,470
Այլ եկամուտ	77,255	-	77,255
Վարչական ծախսեր	(755,789)	-	(755,789)
Այլ ծախսեր	(2,369,638)	-	(2,369,638)
Ակտիվների արժեզրկում	(121,907)	-	(121,907)
Գործառնական գործունեությունից շահույթ	3,015,401		3,029,391
Ֆինանսական եկամուտ	1,035,074		1,035,074
Ֆինանսական ծախսեր	(1,456,817)		(1,456,817)
Փոխարժեքային տարբերությունից վնաս, զուտ	(20,436)		(20,436)
Շահույթ մինչև հարկերը	2,573,222		2,587,212
Շահութահարկի գծով ծախս	(1,311,134)	62,176	(1,248,958)
Տարվա շահույթ	1,262,087		1,338,254
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>			
<i>Հոդվածներ, որոնք հեղափոխում չեն վերադասակարգվի շահույթին կամ վնասին</i>			
Հիմնական միջոցների վերագնահատում	-	169,861	169,861
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	1,262,087		1,508,115

Կուտակված շահույթի վրա ազդեցությունը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. հունվարի 1-ի դրությամբ
Վերագնահատման պահուստի ճշգրտում	1,602,623	1,241,575
Հետաձգված հարկային պարտավորության մնացորդի ճշգրտում	(62,176)	-
Հիմնական միջոցների դուրսգրում	(1,617,395)	(1,617,395)
Հիմնական միջոցների մաշվածության ծախսի ճշտում	13,991	-
	61,395	(375,820)